Ալեքսանդր Արզումանյան

Ծննդյան թիվն ու վայրը՝

1959թ. դեկտեմբերի 24, ք. Երևան:

Կրթությունը՝

1986թ. - Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետ:

Աշխատանքային գործունեությունը՝

2018 թվականից - Նորվեգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Կոպենհագեն),

2017 թվականից - Դանիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Կոպենհագեն),

2012-2017թթ. - ՀՀ ԱԺ պատգամավոր՝ «Ժառանգություն» կուսակցությունից, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ,

2002թ. - աշխատել է մարդու իրավունքների, ժողովրդավարության, տարածաշրջանային համագործակցության հարցերով զբաղվող տարբեր ոչ կառավարական կազմակերպություններում,

2000-2002թթ. և 2008-2012թթ. - Հայոց համազգային շարժման վարչության նախագահ,

1988 թվականից մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը,

1996-1998թթ. - ՀՀ արտաքին գործերի նախարար,

1992-1996թթ. - ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ,

1992-1993թթ. - ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան,

1991թ..-ՀՀ ԳԽ նախագահության և Նախարարների խորհրդի համատեղ որոշմամբ գործուղվել է ԱՄՆ (ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնելու նպատակով),

1990-1991թթ.-ՀՀ ԳԽ նախագահի օգնական,

1988-1990թթ. - Հայոց համազգային շարժման լրատվական կենտրոնի նախագահ,

Մինչև 1990թ. - Քաղաքի կառավարման ավտոմատացված համակարգերի Երևանի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ (ՔԿԱՀԵՆԻ)՝ որպես ճարտարագետ-ծրագրավորող:

Օտար լեզուներ՝

Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն:

Դիվանագիտական աստիճանը՝

Արտակարգ և լիազոր դեսպան:

Ընտանեկան կարգավիճակ՝

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

2019 թվականի փետրվարի 6-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Շվեդիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Ստոկհոլմ):